ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/156-2023
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 21-ՐԴ ՆԻՍՏԻ
19 հուլիսի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	**Տ. Խաչատրյան**

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ՝

Էկոնոմիկայի նախարար	Վ. Քերոբյան
Էկոնոմիկայի նախարարի տեղակալ	Ռ. Գևորգյան
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	Լ. Օհանեսյան
Ինժեներական ասոցիացիա	Ա. Սալաթյան
«Առաջատար տեխնոլոգիական ձեռնարկությունների միություն» ՀԿ	Ս. Կարապետյան
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	Ա. Խաչատրյան
«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ	Գ. Գրիգորյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Վ. Ուռուտյան
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	Ս. Ասատրյանց
«Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ	Հ. Ֆանյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ	Է. Մակարյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ	Լ. Մնացականյան
Ազատ տնտեսական գոտիների համաշխարհային կազմակերպություն	Ն. Մանուկովա
Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա	Հ. Ավագյան
«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա	Կ. Ջաքարյան

Խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակիցներ՝

Ազգային ժողովի պատգամավոր	Հ. Տիգրանյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Հարությունյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ	Ռ. Սարգսյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	Կ. Թամազյան
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ	Գ. Գևորգյան
Կենտրոնական բանկի խորհրդի անդամ	Ա. Մանուկյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական	Լ. Առաքելյան
Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ	Օ. Ալավերդյան
Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ	Ա. Մնացականյան

Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ	Լ. Հարությունյան
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավաբանական վարչության պետ	Ա. Սանթրոսյան
Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության ներկայացուցիչ	Լ. Սարգսյան
Քարտուղարության անդամներ՝	
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ	Լ. Հակոբյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար	Հ. Պատվականյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու	Հ. Մալխասյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ	Դ. Աղաջանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ	Ռ. Սարուխանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող	Վ. Կամարյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության ավագ մասնագետ	Վ. Մխիթարյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ.

Փոխվարչապետի կողմից առաջարկվեց հաստատել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հերթական նիստի օրակարգը: Օրակարգի վերաբերյալ ներկայացվեց հետևյալ առաջարկությունը՝

1. Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի կողմից առաջարկվեց օրակարգում ներառել 1 լրացուցիչ հարց՝ արտահանման վերահսկողությունների կարգավորումների վերաբերյալ:

Օրակարգային հարց 1՝ նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին Խորհրդի քարտուղարի զեկուցում.

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ անդրադառնալով նախորդ նիստերի ընթացքում քննարկված հարցերի և դրանց առնչությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքին: Մասնավորապես՝ ներկայացվեց փորձնակի ինստիտուտի և հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման նպատակով «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի, Պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառված՝ հարկային հսկողության շրջանակներում տեսանկարահանման հետ կապված կարգավորումների, «Սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի, ՍԵՅՖ (Simple Agreement for Future Equity-SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման նպատակով ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի և նախորդ նիստերի ընթացքում քննարկման առարկա դարձած այլ օրակարգային հարցերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Թամազյանը տեղեկացրեց, որ հարկային հսկողության շրջանակներում տեսանկարահանման հետ կապված կարգավորումները լրամշակվել են այն մասով, որ թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով շարժական տեսանկարահանող տեխնիկական միջոցների օգտագործումը նախատեսվելու է հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից:

2) Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը նկատեց, որ հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման նպատակով «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ Խորհրդում քննարկված տարբերակից «համակցված հեռավար» եղանակի դուրս բերումը պայմանավորված է եղել ներդրվող կարգավորումների հստակությունը և պարզությունը ապահովելու անհրաժեշտությամբ:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանին՝ հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման նպատակով «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հետագա քննարկումներում ներգրավել նաև ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ներկայացուցիչներին:

Օրակարգային հարց 2՝ Գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորություն.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը՝ նշելով, որ Աշխատանքային օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ գործատուի մեղքով աշխատավարձի վճարման ուշացման պարագայում

նախատեսված է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0.15%-ի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը: Բացի այդ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169-րդ հոդվածի 8-րդ մասով կազմակերպության տնօրենին նշանակվում է տուգանք՝ չվճարված աշխատավարձի 25%-ի չափով, ինչի արդյունքում առաջանում են իրավիճակներ, երբ իրավաբանական անձի տնօրենը ենթարկվում է անհամաչափորեն մեծ տուգանքների: Տեղեկացրեց, որ վերոնշյալ իրավախախտման համար սահմանված կառուցակարգերը վերանայելու նպատակով մշակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է վերանայել ինչպես նախատեսվող տուգանքի չափը, այնպես էլ տուգանքը նշանակել խախտում թույլ տված գործատուի (իրավաբանական անձ գործատուի դեպքում՝ իրավաբանական անձ գործատուի) նկատմամբ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը, մատնանշելով Սահմանադրական դատարանի մի շարք որոշումները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, նկատեց, որ իրավաբանական անձ գործատուի նկատմամբ վարչական պատասխանատվություն նախատեսելու պարագայում ևս տուգանքը կիրառվելու է խախտում թույլ տված պաշտոնատար անձի նկատմամբ:

2) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն առաջարկեց դիտարկել աշխատավարձը ժամանակին վճարելու պարտավորության կատարման վերահսկողությունը միասնական թվային համակարգի միջոցով իրականացնելու հնարավորությունը:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ հաշվի առնելով քննարկման արդյունքները՝ վերջնականացնել առաջարկվող կարգավորումների բովանդակությունը, և նախագիծը ներկայացնել շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանը:

Օրակարգային հարց 3՝ ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳ ԱԱ կամ ԱԴԳՏ կոդերի սխալ տպագրման դեպքում ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանման հնարավորություն.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Հայկազ Ֆանյանը: Նշեց, որ գործող կարգավորումներով ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցը հավասարապես կիրառելի է խախտման ցանկացած տեսակի դեպքում, մինչդեռ խախտումների պատճառները և

հետևանքները սկզբունքորեն տարբեր են, տարբեր է նաև դրանց վտանգավորության և պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը, հետևաբար համաչափ չէ նույն տուգանքի կիրառումը բոլոր տեսակի խախտումների դեպքում:

2) ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանը ավելացրեց, որ դասակարգիչը սխալ տպագրելը կարող է լինել տեխնիկական սխալի, մասնագիտական թերացման արդյունքում սխալ դասակարգման կամ որևէ այլ պատճառով, ինչի հետևանքով հաշվարկվող հարկի գումարը և պետության եկամուտները չեն նվազում՝ հատկապես հաշվի առնելով, որ ապրանքի անվանումը և գինը տնտեսվարողը ճիշտ է տպագրում:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ Օրի Ալավերդյանը անդրադարձավ պատասխանատվության մեղմացման հնարավոր ռիսկերին՝ առաջարկելով դրա անհրաժեշտությունը գնահատելու իրավասությունը թողնել Պետական եկամուտների կոմիտեի գանգատարկման հանձնաժողովի հայեցողությանը:

2) Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Թամազյանը նշեց, որ ծածկագրերի ճշգրիտ տպագրումը կարևոր նշանակություն ունի մակրո և միկրո վերլուծությունների համար: Ավելացրեց, որ խախտման նմանատիպ դեպքերը մանրամասն քննարկվում են ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովում, և բոլոր այն դեպքերում, երբ խախտումը չարամտորեն արված չի եղել, դիմում-գանգատները բավարարվում են:

3) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը կարևորեց ՀԴՄ-ի կիրառման՝ իրարից էականորեն տարբերվող խախտումների պարագայում պատասխանատվության համաչափ միջոցի սահմանման սկզբունքը, ինչպես նաև այս համատեքստում՝ հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերը նշելու պահանջ սահմանող կարգավորումների ներկայացումը:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ մինչև Խորհրդի հաջորդ նիստը Ֆինանսների նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ վերջնականացնել ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳ ԱԱ կոդերի սխալ տպագրման դեպքում ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի վերանայման քննարկումները, այդ թվում՝ պատասխանատվության միջոցի բնույթի, չափերի, տարբերակման հիմքերի հստակեցմամբ:

Լրացուցիչ օրակարգային հարց՝ արտահանման վերահսկողությունների կարգավորումներ.

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը՝ ներկայացնելով արտահանման վերահսկողությունների վերանայված կարգավորումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ